# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/23

ք.Երևան «30» « 11 » 2018թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 17.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/23 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, կապված համաներման հետ, էական նվազել է, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ 4-րդ եռամսյակի ընթացքում, մատակարարման ենթակա 15000 կգ «մակարոն» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 4000 կգ, որի գումարը կազմում է՝ 915960 ( ինը հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, քանի որ նշված քանակի չափով վերացել է «մակարոն» ապրանքատեսակի գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պայմանագրի գինը կազմում է 5953740 (հինգ միլիոն ինը հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 1-ին չափաբաժնի սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/23 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 5 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա. Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Տնօրեն՝
Ա. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« 30 » « 11 » 2018 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/23 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 15851100-1 | մակարոն | Ագրոսպարոդուկտ ԲԲԸ<br><br>ՌԴ | Ցորենի կոշտ (պինդ) տեսակի բարձրորակ, սպիտակուցներով հարուստ ալյուրից, տեսակը՝ խողովակաձև, օղակներ, բարակ, ձևավոր և այլն: Երկարատև պահելու հնարավորությամբ, առանց սննդային, համային հատկությունների կորստի, բարձր սննդարարությամբ: Չափածրարված մինչև 5 կգ սննդային փաթեթներով (տոպրակներով): ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Պատրաստման և պահպանման ժամկետը նշված լինի փաթեթի վրա: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ | կգ | 228.99 | 5953740 | 26000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 26000 | 2018թ.<br><br>2-րդ եռամսյակ 5000 կգ,<br><br>3-րդ եռամսյակ 10000 կգ,<br><br>4-րդ եռամսյակ 11000 կգ,<br><br>եռամսյակների ընթացքում, ոչ ուշ մինչ 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պահանջներ» N 2-III-4.9-01-2010 նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Տնօրեն՝
Ա. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«30» «11» 2018 թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/23 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 1 | 15851100-1 | մակարոն | - | 1144950 | 3434850 | 5953740 | 5953740 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Տնօրեն՝
Ա. Դանիելյան
/ստորագրություն/
Կ.Տ